ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/8» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 14-ը հունիսի 2018թ. ժամը 11[00]

Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝

ՀՀ ՊՆ աշխատակազմի ղեկավարի տեղակալ, ՔՀԾ 2-րդ դասի պետական խորհրդական Ս. Աբովյան,

գնահատողներ՝ ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության ՁԲՖԿ ծառայության պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Ա. Պապյան,

ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության սպա, լեյտենանտ Հ. Բաղալյան,

ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Ա. Մաղաքյան,

Գնումները համակարգող՝

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի առաջատար մասնագետ, ՔՀԾ 2-րդ դասի առաջատար ծառայող Մ. Հոխեյան:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/8» ծածկագրով բաց մրցույթի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Մ. Հոխեյան)

1. Մասնակցի(ների)՝ բաց մրցույթի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իր(իրենց) համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց բաց մրցույթի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Մասնակցի(ների)՝ բաց մրցույթի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իր(իրենց) համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց բաց մրցույթի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.

(Մ. Հոխեյան)

1.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/8» ծածկագրով բաց մրցույթին «Գլենսեր» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի գնահատման արդյունքում արձանագրվել են անհամապատասխանություններ՝ մասնավորապես. «Գլենսեր» ՍՊԸ կողմից ներկայացված պայմանագրի պատճենը ամբողջությամբ ներկայացված չէր՝ 28.03.2017թ. կնքված N ԲԸԱՇՁԲ-10/4-1 ծածկագրով պայմանագրի 8.10 կետում նշված էր, որ «Սույն պայմանագիրը կազմված է 12 էջից» և սույն Պայմանագրի N1, N2, N3, N4 և N 4.1 հավելվածները հանդիսանում են Պայմանագրի անբաժանելի մասը, այն ինչ ներկայացված պայմանագրի պատճեն կազմված էր 10 էջից և կից ներկայացված են Պայմանագրի N1, N2 և N 3 հավելվածներ, ինչպես նաև բացակայում էր «Գլենսեր» ՍՊԸ կողմից ներկայացված պայմանագրի /համաձայնագրի/ հաշիվ ապրանքագրերի պատճենները /ինչը պահանջվում էր ԲՄԱՇՁԲ-10/8 ծածկագրով բաց մրցույթի հրավերով/: «Գլենսեր» ՍՊԸ կողմից ներկայացված տրանսպորտային միջոցների վարձակալության մասին պայմանագրի առաջին մասում որպես վարձակալ նշված էր «Գլենդեր» ՍՊ Ընկերությունը, իսկ վերջնամասում որպես վարձակալ նշված էր «Գլենսեր» ՍՊԸ, ինչպես նաև որպես տնօրեն նշված էր Ա. Գրիգորյան, մինչդեռ մնացած փաստաթղթերում տնօրեն նշված էր Վ. Գրիգորյան: Հանձնաժողովը՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը արձանագրված անհամապատասխանության մասին www.armeps.am կայքի ոչ ավտոմատ ծանուցումով տեղեկացրեց «Գլենսեր» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել վերը նշված անհամապատասխանությունները, իսկ շտկված տարբերակը ուղարկել m.hokheyan@mil.am էլեկտրոնային հասցեին: «Գլենսեր» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում շտկեց անհամապատասխանությունները և վերջինիս կողմից ներկայացված որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը հանձնաժողովի կողմից գնահատվեց բավարար:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն «Գլենսեր» ՍՊԸ-ն Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունի, իսկ հրավերով նախատեսված «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող որակավորման պահանջներն առկա են:

1.2 ***14.06.2018թ.*** հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց «Գլենսեր» ՍՊԸ-ի որակավորման հատկանիշները գնահատել համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/8» ծածկագրով բաց մրցույթի հրավերի պահանջներին, վերջինիս հայտարարել ընտրված (հաղթող) մասնակից և անգործության ժամկետի ավարտից հետո պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

1.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀՊՆՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/8» ծածկագրով մրցույթի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Մ. Հոխեյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/8» ծածկագրով բաց մրցույթի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագրի կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը 15⁰⁰-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող(ԳԱՊ)	Ս. Աբովյան
Գնահատող	Ա. Պապյան
Գնահատող	Հ. Բաղայան
Գնահատող	Ա. Մաղաքյան
Գնումները համակարգող՝	Մ. Հոխեյան

14.06.2018թ.